



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ: ԱՃԱՌԵԱՆ

ՄԵՍՐՈՎ ՄԱՇՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՅԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Ե ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

§ 1

Այսպես հիմնվեց հայ մատենագրությունը, որի հայրն ու հիմնադիրը եղավ Մեսրոպ Մաշտոց և մեծագույն գործիչը՝ Սահակ: Ս. Դրբի թարգմանությունը դարագուի բացակայում է կյանքում, նրան հետևեց բազմաթիվ գրքերի թարգմանությունը, ամեն կողմ զբարուցներ բացվեցին: Էջմիածնի վարդապետարանը մի կողմից ուսուցիչներ էր հասցնում, մյուս կողմից նորանոր երկեր հրապարակ հանում: Հռուփանոսի սովորեցրած աշակերտները տարածեցին գրչության արվեստը Հայաստանում, գրիչների իմբերը սկսեցին իրար գերազանցել և ձեռագրերի արտադրությունները բազմաթիվ տիսակներով սփուռում էին ամեն կողմ: Վանքերը դարձան կրթության կենտրոններ, եկեղեցները պահառացան, հայերն ժամերգությունը և հայերն ընթերցվածները շուրջ ու իմաստ տվին նրանց, ու քաշում էին մարդկանց ահազին մի բազմություն, որ հաճությամբ ունեկնդրում էր մայրենի լեզվով ժամերգության: Վարդապետները կամ մեկնիւները բնմերից հորդարուի քարոզներով երկնային խոսքը սփռում

էին նրանց մեջ և կրոնի հաստատ գիտակցությունը ամրապնդում: Վերջապես ամբողջ երկիրը տոգորված էր գրական-կրոնական մեծ շարժումով:

Բայց ինչ որ այդ բոլորի մեջ գերազանցում և ամբողջ շարժման անիվն էր կազմում, զա էր անկախ ազգային ինքնաճանաչության և ազգային գիտակցության գաղափարը, որ մինչև այն չկար:

«Պարսկական մասին վերին իշխանությունը նորանոր փորձեր կըներ հայ ժողովուրդը զուած մազգեզանց կրոնին վերադարձնել և պարսիկ լեզվում ու մատենագրությունը տարածել անոնց մեջ, մինչ արևմտյան մասին տիրող հոռոմները անարգանոք կնայեին րարբարուսներու վրա և անոնց լեզվին ու առանձնահասկությանց բնականորեն որևէ ըմբռնում չունեին:... Այս պատճառով եթե նկատենք այն պարագաները, որոնց տակ Մաշտոց ու Սահակ իրենց մտքի գործունեությամբը եկեղեցական ու ժողովրդական ինքնափիտակցության զարթուցին Հայ Ազգը, և այս գործին հետ համեմատության զննեք դանայան այն պարգմը, զոր Պետինու փոնակ քաղաքական ու եկեղեցական ամեն միջոց լիապես ի ձեռին ունենալով նվիրեց գերման ժողովրդյան, այն ատեն թե՛ Պետինոս և թե՛ յուր զինակիրը վեհնֆրիդ խեղճ թզուներ կերևան համեմատությամբ մտքի

* Նարունակված ոչ էջմիածին ամսագրի 1954 թվականի XII, XIII, 1955 թվականի I, II, III, IV, IX, 1956 թվականի I, II, IV-V, VIII-X, XI-XII և 1961 թվականի Ժ և ԺԱ համարներից:

այն հսկաներուա (Մարգվարտ, «Պատմություն հայ նշանագրերուա, էց 7—8):

Հայաստանի ամեն կողմերում բացված դպրոցները, եշմիքանի վարդապետարանը, Սահակի և Մեսրոպի անխոնչ գործունեությունը և իրենց աշակերտների ուսումնակրեռները քիչ ժամանակում այնպես բարձրացրին հայոց հոգեւոր ու մտավոր հորիզոնը, այնպիսի ծաղկյալ վիճակի մեջ դրին բովանդակ երկիրը, որին երբեք չհասավ հետո անցյալում: Այս պատճառով ն դարը, համեմատությամբ բոլոր հաջորդ դարերի, կոչեց Ոսկեդար:

Փարպեցին, որ ժամանակակից չեր այս գրական շարժման սկզբնավորության, բայց նրա ավելի մեծ չափերով ծաղկումը տեսավու վայելեց, այսպես է նկարագրում երկրի այն ժամանակավա վիճակը. օւեւ դարձեալ ի գույնու սրբոյ Հայրապետին Հայոց Սահակա, զգործ մեծ հոգեւոր վաստակոյն՝ կարգեցան վաղվաղակի յայնմէնոտ զպրոցի հօտին ուսմանց, բազմացան դասք գրաց, եկեղեւ առնելով զմիմեամբ զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցույ, յորդորեցան բաղմութիւնք արանց և կանանց ժողովունոց ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց: Որք շահեալք լի հոգեւոր օգտիւ՝ ընթանային ինդակիցք. ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, մեծամեծք և տղայք, սաղմունով և կցորդս ասերով ամենայն տեղիս, ի Հրապարակս և ի փողոցս և առոտնին: Պայծառացան եկեղեցիք, շուր առին վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ի նոսս ուկան Կոտակարանաց. Ընծայիք. հանապազարութիւն հոսէին վտակք յասողացն, մեկնութեանց, որը զծածուկը մարդարէից բերելով ի յայտնութիւն: սեղանս ամենալից հոգեւոր, խորտակօք գնէին առաջի ամենայն ժողովրդեանն: յորոց հաշակեալ իմաստախնդիրն մարդոց՝ քաղցրանայ ի քիմն նոցա, ըստ բանի սաղմուներգին, Բանք վարդապետութեան քան վերիսիս մեղուս եւ զի միանգամայն իսկ ասացից ըստ բանի սուրբ մարդարէին նսայեալ, թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգեւոր վտակք սուրբ հայրապետին Սահակայ, իրք զջուրս բազումո որ ծածկն զծովս: եւ շնորհիւ ամենախնամ Փրկչին Փրիստոսի կատարեալ այս առենայն ի ժամանակս Վումշապհոյ, ըստ յառաջագուն գրելոց, և լուսաւորեալ աշխարհս Հայոց (Փարպեցի, էց 17—18):

Ամբողջ այս մեծ շարժումը, գրական այս մեծ գործունեությունը Սահակի և Մեսրոպի աշխատության արդյունքն է: Մոտիկից տեսնենք, թէ ի՞նչ նկարագիր ունի հիշյալ նորածիլ գրականությունը, որո՞նք են նրա բնորոշ հատկությունները, որո՞նք են Սա-

հակի և Մեսրոպի աշակերտները, և վերշապիս ի՞նչ գրական արտադրություններ մնում են մեզ հիշյալ ժամանակից: Այս տեսությունը ավելի լավ պիտի պատկերացնե երկու նշանավոր գործիչների աշխատությունը:

Արդյունքը թող ցուց տա գործիչն:

§ 2

Երկու բնորոշ հատկությունն ունի Ոսկեդարի գրականությունը. առաջին՝ կրոնական գույն և երկրորդ՝ թարգմանչություն: Այս երկու հատկություններն էլ միայն մեզ սեփական չեն և հատուկ են բոլոր այն գրականությանց, որ մի անգամից և ձոխությամբ են մտնում ժողովրդի մեջ: Այն ժամանակավա հասկացողությամբ գրականությունը պարզապես կրոնի զարգացման կամ ժամանակագության ծառայող մի գործիք էր. ուսուցչական գործը հանձնված էր միհիայն կրոնավորներին, և սրա համար է որ վարդապետ, որ բնապես ուսուցիչ կամ վարժապետ էր նշանակում, հետո դարձավ կրոնավորական աստիճան: Նույն հասկացողությունը կենդանի էր դեռ մինչև վերշերս բոլոր արեւելան հետամնաց ժողովրդի մեջ, ուամիկը կարդալ բառով «հեկեղեցական երգեցողություն» էր հասկանում և կարգացն անունը սալիս էր բոլոր կրոնավորներին, Սահակ և Մեսրոպ նմանապես առաջնորդված լինելով այս գաղափարով և գրականությունը կրոնական զարգացման համար միայն տված վիճելով Ազգին, բնական է, թե ամենից առաջ Ս. Գրիգոր և կրոնական գրքեր պիտի տային նրան: Այսպես է եղած նաև իունիդական, գոթական և սլավական մատենագրությանց սկզբնավորությունը. այստեղ էլ տեսնում ենք, որ գրականությունը մտել է միայն կրոնական պետքերը լրացնելու համար և սկսել է նաև Ս. Գրիգի թարգմանությամբ: Աֆրիկայի, Ամերիկայի և Օվկիանիայի արդի բազմաթիվ ժողովությունների խիստ շատերի գրականությունը միհիայն Ավետարանի թարգմանությունից է բաղկացած և կատարված է ավետարանական քարոզության նպատակով և քրիստոնեություն տարածող միսիոների ձեռքով:

Թարգմանչությունը նմանապես պայման է բոլոր նոր սկսող գրականությանց համար, մանավանդ նրանց, որ ուժեղ թափով հն սկսում: Եթե Ս. Գրիգի թարգմանությունը կրոնական պահանջ է արդեն, առհասարակ թարգմանությունը սնումն է նորածին գրականության, որ դեռ զարգացման բարձր աստիճանի հասած Ալինելով, լի կարող անկախ երկեր արտադրել թարգմանու-

թյուննքրն են, որ պիտի սնուցին նրան, սրբնից հետո պիտի գան նվանողաբար կազմված աշխատություններ և հետո միայն բռլորովին անկախ գործեր:

Մեր գրականությունը չէր կարող բացառություն կազմել ընդհանուր օրենքի մեջ. ուստի բնական է, որ նա էլ սկսեր թարգմանությամբ և թարգմանիշներով:

§ 3

Սկսեղարի գրականության ու կրոնական շարժման մեջ մեծ դեր են կատարած բարգևանիշ կոչված անձերը ժամանակակից պատմության մեջ այս անունով են հայտնի բայ Կորյունի Հովհանն Եկեղեցացի, Հովսեփ Պաղսացի, Եղինիկ Կողբացի ինքը Կորյուն և Ղեոնդ, որոնց վրա Խորենացին ավելացնում է նաև Արձան: Թե բուն ի՞նչ է նշանակում այստեղ այս բարգմանիշ տիտղոսը, շատ հայտնի չէ: Ոմանք կարծում են, թե այս տիտղոսը տրվեց Սահակի և Մեսրոպի բոլոր աշակերտներին, որովհետև սրանց աշխատության մեծագույն մասը հունարեն կամ ասորերեն թարգմանություններից էր բաղկանում: Գանձակեցին թարգմանիշ է կոչում եզմիածնի վարդապետարանի աշակերտներին. «Եւ ուսեալ մանկանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և արտաքինս, եղին թարգմանիշ Ըլշմարտութեան, և թարգմանիցին զամենայն գիրս Հին և նոր Կոտակարանացն» (էջ 15):

Բայց Գարագայշյան, անպատեհ համարելով այս կարծիքները, ինթաղոսում է, թի թարգմանչությունը մի առանձին արվեստ էր, որ կար մանավանդ գրերի գյուտից առաջ թարգմանիշ տիտղոսը ընդհանուր չէր բռլոր այն ժամանակի վարդապետներին, այլ այս անունով կոչվում էին միայն անձերը, որոնք սովորել էին առանձնապես թարգմանչության արվեստը («Քննական պատմություն», Դ, էջ 44—45): Եթե թարգմանիշ տիտղոսը տրվեր հունարենից կամ ասորերենից գրերը թարգմանած լինելու պատճառով, բնական է, թե գրերի գյուտից առաջ թարգմանիշ շպիտի գունվեր: Բայց ահա վերջո՞ջալ վեց անձերից գոնե մի մասը թարգմանիշ էր գրերի գյուտից առաջ, նույնիսկ Մեսրոպ թարգմանիշ է կոչված Խորենացուց իր քարոզության գիռ առաջին շրջանում. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս քանդի ինքն էր ընթերցող և թարգմանիշ. և եթէ այլ որ ընթեռնոյը, ուր նա ոչ հանդիպէր, զանխով ի ժողովրդոցն ինէր յաղագս ոչ լինելոյ թարգմանչի» (Խորենացի, Գիտ), միշտ այս խոսքից շատ չայլնի կերպով հասկացվում է, որ երկու

տարրեր պաշտոն կար այն ժամանակ, ընթերցող և թարգմանիշը Ընթերցողն այն էր, որ գեղեցիկ ձայն և լավ առողջանություն ունենալով, կարդում էր Ս. Գիրքը եկեղեցում. իսկ թարգմանիշը «Ս. Գրքի մեկնին» էր: Ընթերցողը հաճախ շեր էլ հաւականում կարդացածի միտքը, որովհետև ասորերեն կամ հովարձակ էր: Բայց թարգմանիշը լավ գիտեր այդ լեզուներից գոնե մեկն ու մեկը և ընթերցումից հետո բեմ բարձրանալով, ալքը պահած գրքի վրա, բացարձիւմ էր հայերեն լեզվովիշտյունը: Մյա համար առանձին գեղեցիկ ձայն հարկավոր շեր, այլ միայն այն լեզուներին հմտություն և գիտություն: Բնականաբար այս պաշտոնները գոյություն ունեն այն ժամանակ, երբ հայերեն գրականություն շգտնվելով, եկեղեցական ընթերցվածները հունարեն և ասորերեն էին լինում և նրանք հայերեն լեզվով ժողովրդին բերանացի բացատրելու պիտք կար: Անշուշտ ընթերցողներ ավելի շատ կային քան թարգմանիշներ: ուստի կարող էր պատահել, որ մի եկեղեցում ընթերցող լիներ, բայց թարգմանիշ չգտնվեր: այն ժամանակ ընթերցումը կատարվում էր սովորական կարգով, իսկ մեկնսությունը չէր տրվում, ինչպես Խորենացին ասաց բիշ առաջ, իսկ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում:

Արդի քննիչները, որ թարգմանիշ բառը սխալ մեկնելով իրեն ընդհանրապես Սահակի և Մեսրոպի աշակերտ են համականում, երկու խմբի են բաժանում նրանց.

1) առաջին կամ երեց թարգմանիշներ, և 2) երեսորդ կամ կրտսեր թարգմանիշներ: Առաջին են համարվում այն աշակերտները, որ գրերի գյուտի ժամանակ բալական հասակ և զարգացում ունենալով, կարող էին իրենց վարդապետներին օգնական ու գործակից հանդիսանալ թարգմանությանց մեջ: Իսկ երկրորդ են կոչվում առաջին թարգմանիշների աշակերտները, որոնք սրանց մոտ բաշական կրթվելուց հետո, իրենց ուսումը կատարելազործելու համար ուղարկվեցին զանազան քաղաքներ: Առաջին աշակերտները 60 հոգի էին: բայց նրանց մեծ մասի վրա հիշատակություն չկա: Նրանցից հայտնի են միայն՝

1 Հովսեփ քահանա՝ կաթողիկոս Վայոցձորեցի:

¹ Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 277, առում է, թե Սահակ ուներ 60 աշակերտ, այժմ ավելացան Մեսրոպի 40 աշակերտները («Սովորեք», Բ, էջ 9):

- 2 Արբահամ խոստովանող Զենակացի,
եպիսկոպոս Բզնունյաց.
- 3 Անանիա կամ Անանիաս, եպիսկոպոս
Սյունլաց.
- 4 Գինթ կամ Գնիթ, եպիսկոպոս Գերշանի.
- *5 Եղինիկ կամ Եղնակ Կողբացի, եպիսկո-
պոս Բագրևանդա.
- 6 Երեմիա, եպիսկոպոս Աղվանից.
- 7 Կորյուն, եպիսկոպոս Վրաց.
- 8 Մովսես, եպիսկոպոս Վրաց.
- 9 Մուշե կամ Մուշեղ, եպիսկոպոս Արծրու-
նյաց.
- 10 Սամվել, եպիսկոպոս Վրաց.
- 11 Տեր Խորձենացի, եպիսկոպոս Կայենա-
կան.
- 12 Աղան Արծրունի.
- *13 Արձան.
- 14 Գիտ կամ Գյուտ Գողթնեցի.
- 15 Դանան.
- 16 Ենովք.
- 17 Երեմիա երեց Վաղարշապատցի.
- 18 Թաղիկ կամ Թողիկ.
- 19 Խոսրով կամ Խոսրովիկ թարգմանիչ.
- 20 Ղևոնդ կամ Ղևոնդես երեց Վանանդեցի.
- 21 Մուշե Տարոնեցի.
- 22 Հովհան խոստովանող.
- *23 Հովհան Եկեղեցացի.
- 24 Հովհաթան քահանա.
- *25 Հովսեփ Պաղնացի.
- 26 Տիրայր Խորձենացի.
- 27 Վահան Ամառունի.
- 28 Հմայակ Մամիկոնյան:
- Այս թարգմանիչների մասին տե՛ս ի միջի
այլց Չամլյան, Ա, 535—541, Զարրհանալ-
յան, «Պատմություն Հայկական դպրության»,
Ա, էջ 272—277 և ավելի ընդարձակ՝ Հով-
հաննես վարդապետ Միսքճյան, «Հանդես
ամսօրյա», 1902, էջ 58—61 և 145—151.
Իսկ երկրորդ թարգմանիչներն են, ըստ
Զարրհանալյանի, անդ, էջ 277—280.
- 1 Դավիթ Անհաղթ.
- 2 Գյուտ կաթողիկոս.
- 3 Հովհան Մանդակոնի.
- 4 Եղիշե.
- 5 Մովսես Խորենացի.
- 6 Մամբրե Վերծանող.
- 7 Ղազար Փարպեցի.
- 8 Եղրաս Անգեղացի.
- 9 Խաչիկ կամ Խաչատուր.
- 10 Անդրեաս.
- 11 Թաթուլ.
- 12 Վարոս:
- Թարգմանիչների այսպիսի բաժանումը
ըստ Գարագաշյանի «գիւտ է արդեաց» և գո-
յություն լունի իրականության մեջ: Սրանց
համար իրեն պատմական փաստ են ժառա-
յուն, «Թայսմաւուրք», Շնորհալի, «Ասողիե».

Սամվել երեց և ուրիշ զանազան հետին մա-
տենագիրներ, որոնց վկայությունը հիմքնե
ամենեն զորություն չունի: Սրանց մեջ հի-
շենք հատկապես Կիրակոս Դանձակեցին, որ
թարգմանիչների կարգի է դասում մինչև իսկ
«Մետեփաննոս»: Սիմեաց եպիսկոպոս» և
«Հոռուփաննոս» (գեղագիր Հովին), և որպեսզի
սիսակ հասկացողություն շկաղմվի հիշյալ
անձերի մասին, առաջինի համար ասում է.
«Սիմեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնն
ինող Սուրբ Գրոց, Յորայ և Աւետարանացն,
այլ և Դանիէլի և Եղիշէլի, և զպատասիա-
նիս թղթոյն Գերմանոսի պատրիարքին Կոս-
տանդնուպոլիսի»: Իսկ երկրորդի համար՝ որ
զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հոռուփաննոս Սա-
մոսացից»:

Շատ կասկածելի են մանավանդ կրոսեր
կոչված թարգմանիչները, որոնցից ումանք,
ինչպես Դավիթ Անհաղթ և Մովսես Խորենա-
ցի, դեռ և զարդի Հեղինակներ էլ չեն, այլ ա-
վելի ուզ ժամանակի: Իրեն առաջին թարգ-
մանի մեջ բերված անձերը գրեթե բոլորն էլ
ժամանակակից պատմագիրներից վկայ-
ված են, բայց սրանցից իսկապես միայն
վեցն են, որ թարգմանակած նշանակությամբ: Այս
անձերը նշանակել ենք աստղանիշով: Մյուս-
ները իրոք աշակերտ եղել են Մահակին և
Մեսրոպին, բայց թե սրանք էլ թարգմանիչ:
Եղել են՝ Հայտնի չէ: Գիտենք միայն, որ
նրանք զանազան պաշտոններ են վարել Հա-
յաստանում, ինչպես եպիսկոպոսն կամ առաջ-
նորդ, դպրոցների վերակացու, քահանա,
սարկավագ և գործակից իրենց վարդապետ-
ներին, բայց այլ է աշակերտ և պաշտոնյա,
այլ է թարգմանիչ:

Նմանապես նույն աշակերտները բոլորն
էլ չեն մասնակցած այն գրական արտադրու-
թյանց մեջ, որ և դարից ժառանգություն են
մնում մեզ: Ինչպես նախորդ գլուխներում
տեսանք, դարձալ նույն հինգ կամ վեց ան-
ձերն են, որ ասորերենից կամ հունարենից
թարգմանության մեջ զեր ունեն: Անշուշտ
կարող են գտնվել սրանցից դուրս նաև ուրիշ
անձեր հիշյալ 28 աշակերտների խմբից, ո-
րոնք զեր են ունեցել այս թարգմանությանց
կամ ուրիշ գրական աշխատավայր մեջ,
բայց նրանց անունները չեն հիշատակված:

Տ 4

Ե գարը համեմատելով հաջորդ դարերի
հետ, շատ ճոխ է գրական արտադրությանց
կողմից: Արանց թվական առավելությունը
գերազանցում է բոլոր մյուս դարերից: Մի-
այն ժմ գարն է, որ կարող է այս կողմից
մրցել ծ դարի հետ: Գալով լեզվական ար-
ժանիքին, ոչ մի դար շկարողացավ մոտենալ
Ռուկարի լեզվին և ծ դարի հայերենը ամեն

դարի և ամեն ժամանակի համար եղավ լեզվի գասական օրինակ:

Ե դարից մեզ հասած աշխատությունները շատ են և իրենց լեզվական փոխադրձ նմանությունից զատելով բաժանվում են չորս դասի կամ դպրոցի, այն է Եզնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան և Ագաթանգեղյան: Այս դպրոցների լեզվական (կամ ոճական) տարրերությունները, ինչպես նաև յուրաքանչյուր դպրոցին պատկանող աշխատությունների ցանկը տե՛ս իմ «Հայոց լեզվի պատմության» մեջ, մասն թ, գյուկի Ժ:

Ոսկեղարի գործերը կարող ենք բաժանել նաև երեք տեսակի: 1) ինքնագիր գործեր, 2) ասորերենից թարգմանություններ և 3) հունարենից թարգմանություններ: Ամենից սակավաթիվը առաջինն է: մեզ հասած աշխատությանների մեծագույն մասը պատկանում է երրորդ տեսակին, իսկ ասորական թարգմանությունները բանակով բռնում են երկուի միջին տեղը: Այսպես, ինքնագիր են միայն Եզնիկ, Կանոնագիրը, Սահակի և Մեսրոպի թղթերը, Կորյուն, Ագաթանգեղյան և Բյուզանդ: ասորերենից են Եփրեմյան դպրոցի արտադրությունները և ուղիղներ, իսկ մնացյալը հունարենից է թարգմանված:

Թուրոր այս աշխատությունները, ինչպես ասացինք, արդյունք են Սահակի, Մեսրոպի և իրենց աշակերտների գրչի: բայց գիրքի տարար որոշակի հայտնի չէ, թե ո՞ր գործերը ո՞ր հեղինակից են: Բանասերները աշխատել են հեղինակը այլուստ ծանոթ աշխատությունների լեզվում համեմատել անձանոթների լեզվի հետ և դրանով գտնել, թե այս վերջիններից որոնք ո՞ր հեղինակին են արկել: Այսպիսի համեմատական քննության երեսի մի օրինակ տվեց նորայի Բյուզանդացին իր «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք» գրվածքով, որի մեջ ապացուցում է, թե Ագաթանգեղյոս, Բյուզանդ, Մակարայից լոց երեք գրքերը և ելթաղի Ս. Գրոց առաջարանները՝ Մեսրոպի կենսագրության հեղինակի, այն է Կորյունի աշխատություններն են: Սրան հակառակ տե՛ս Կոդյան, «Մակարայից լոց Բ գրքին հայերն թարգմանությունը», Վիճննա, 1923, էջ 19—20 և մեր նկատողությունը «Հայոց լեզվի պատմության» մեջ, մասն թ, Մ. Գարգաշյան կարծում էր, թե չորս մեծ մարգարենները, Ոսկերերանի «Մեկնութիւն Մատթէի, Թղթոցն Պողոսի, Սասյայ, Մննդոց» և Մերերիանոսի ճառերը, որոնց մեջ ծանր, լուրջ ու հանդարտ մի լեզու է տիրում, թարգմանություններն են Սահակի՝ իբրև լուրջ և ծանրագուխ ալեղարդ ծերունու նույն հեղինակը կարծում էր դարձալ, թե Մովսեսի

Հնգամատյանը, Ավետարան և այլ այսպիսի վերլուծական շարադրությամբ (պարզադույն հայերենով) գրված աշխատությունները Մեսրոպին են: Ավելի իրական փաստ ունենք ասորականից եղած թարգմանությունները (Եփրեմի «Մեկնութիւնք Հին և Նոր Կտակարանաց», «Համարաբրաւ», «Մեկնութիւն Աւետարանի», «Մեկնութիւն Պողոսի 14 թղթոց», «Ճառք», «Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւն», «Զգօն», «Հարուբրնա Եղեսացի», «Թուղթք Իգնատիոսի») վերագրելու շուրջիկ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն, քանի որ Կորյունի վկայությամբ գիտենք, թե այս երկու աշակերտներն են, որ Եղեսիա ուղարկվեցին՝ ասորական գրվածները հայերենի թարգմանելու համար: Ռորոց դարձեալ դէպ լինէր Եղեարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացոց, զնովսէփ, զոր ի վերոյն յիշեցք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողմբ գեղչէ, զի յասորական ըարբառոյն՝ զնոցին հարցն սրոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցենս (Կորյուն, էջ 20): Շանոթ է նաև, որ Արբահամ Զենակացին թարգմանել է «Վկայք Արևելիցցաց»-ը, իսկ հունարենից եղած թարգմանությանց համար Կորյուն (էջ 21) հշում է Ղեռնդի, իր՝ Կորյունի և Եզնիկի անունները: Բայց այս խնդիրը կարելի պիտի լինի ճիշտ կերպով պարզել միայն այն ժամանակ, եթե կկազմվի Ոսկեղարի հայ մատենադրության ամբողջական համարաբառություն:

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Ե դարի գրական մեծ շարժումը կազմեց ու ձևակերպեց հայ ազգային ինքնանաշողությունը. դա հին հայոց Ոսկեղարն է:— 2. Ոսկեղարի գրականությունը ընդհանրապես կրոնական բնույթ ունի և բարգմանական է:— 3. Թարգմանիչները բաժանվում են երկու կարգի: առաջին թարգմանիչներ (սրանցից հայտնի են 28 հոգի) և երկրորդ թարգմանիչներ (հայտնի են 12). այս բաժանումը վավերական չէ:— 4. Ոսկեղարը բաժանվում է 4 պարոցի (լեզվի տեսակետով). Եզնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան և Ագաթանգեղյան: Գրական արտադրությունները Երեք տեսակ են. 1) ինքնազիր, 2) ասորենից թարգմանություններ, 3) հունարենից թարգմանություններ: Ինքնազիր գործերի նեղինակները հայտնի են, թարգմանիչները մեծ մասամբ անհայտ:

ԳԼՈՒԽ ՏԱՍԽԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹԵՌԴՈՐՈՍ ՄՈՊՍՈՒԵՍՏԱՑՈՒ ՀԵՐՁՎԱԾԸ

§ 1

Կորյուն Սահակի և Մեսրոպի վերջին օրերին է զնում Նեստորական հերձվածի երկրորդ հայտնությունը, որի դեմ մաքառեցին երկու հայրերը և կարևոր թղթակցություն ունեցան նշանավոր հույն եկեղեցական հայրերի հետ:

Այս խնդրի հանգամանքները հետևյալներն են:

Եփեսոսի ժողովից հետո, կայսերական հրովարտակով հրամայված էր ամենքին այրել Նեստորի գրվածքները, ուր որ գտնվեին. Նույնպես պատիճ էին սպառնացած այն անձանց, որոնք պահում կամ կարդում էին այդպիսի գրվածքները Նեստորականները տեսնելով, որ իրենց աղանդը իսպառ բնաշինչ պիտի լինի, մտածեցին մի ուրիշ հնարք: Սկսեցին հրապարակել Նեստորի ուսուցիչ թեոդորոս Սովորուեստացու և սրա էլ ուսուցիչ թեոդոր Տարսոնացու գրքերը, որոնց նպատակն էր Եվլումիսոսի և Ապոլինարի մոլորությունները հերքել: Նեստորականները Նեստորի քարոզություններն էլ խառնելով նրանց հետ և պաշտպանելով նրանց մեջ գրվածներն իբրև ուղիղ և համաձայն սուրբ հայրերին, ուզում էին մի կերպ արդարացնել Նեստորին, իբր թե ինքն էլ նրանցից տարբեր մի բան չէր քարոզած: Այս կարծիքները նաև արևելյան ազգերի մեջ տարածելու համար, նեստորականները թեոդորոսի և Դիոնորի գրքերը Հունարենից թարգմանելով հայրեն, պարսկերեն և ասորերեն լեզուների, սկսեցին ցրել այս լեզուները խոսող ազգերի մեջ: Այս գրքերի շարքում հիշվում է Հատկապես թեոդորոս եպիսկոպոս Սովորուեստացու (350—428) գրած մի գիրքը մոգական կրոնի դեմ (այժմ կորած), որ ուղղել էր հայոց Մատութիւն քորեպիսունին, և որ Saint-Martin համարում է, թե մեր Մաշտոցն է (տե՛ս Փորթուգալ փաշա, «Եղիշե», էջ 159, նույնը և Աղոնց):

Նույն հայրերը լսելով այս բանը, պարտք համարեցին գրել Հայաստան՝ զգուշացնելու համար, որ շխաբվեն այդ քարոզիչներից: Առաջին թուղթը գրեց Պրոկոլ, որ Հովհանն Պոկերանի աշակերտն էր և 434 թվին Պոլսի Պատրիարքական Գահն էր բարձրացել: Այս թղթի մեջ, որ գրված է 435 թվին, Սահակի և Մեսրոպի անոնով, Պրոկոլ նախ բացարում է ուղղափառ վարդապետության դալանությունը, հետո ցուց է տալիս նեստորականների քարոզած մոլորությունները, որոնք մի առ մի հերքում է, և վերջապես հայտնում է,

թե լսել է, որ մի քանի նեստորական քարով վիճներ եկել են Հայրաստան, Հորդորում է հեռու մնալ նրանցից, անխախտ պահելով ճշշմարիտ դավանությունը:

Պրոկոլի թուղթը հասած է մեզ շորս լեզվով նախ՝ Հունարեն բնագիրը, երկրորդ՝ հայերեն ուկեղարյան թարգմանությունը, երրորդ՝ ասորերեն աղավաղյալ թարգմանությունը և չորրորդ՝ լատիներեն հարազատ թարգմանությունը: Հայերենը հրատարակված է նախ՝ «Պատկեր» թերթի մեջ (1890, էջ 219—222, 271—276), հետո «Դիրք թղթոց»-ի մեջ, էջ 1—8 և մասամբ էլ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ: Բայց հայերեն հրատարակության սկիզբը խանգարված և նրա հետ է խառնված եղնիկի ծանոթ թուղթը նույն խնդրի առթիվ երեք լեզուների համեմատությամբ և առաջարանական ուսումնամիջությամբ մի պատվական հրատարակությունին և. Արիստակես Վարդանյան, տպված «Հանդիս ամսօրյաց»-ի մեջ 1921, էջ 1—25, որին հետևում ենք նաև մենք: Նույնը արտապված է նաև «Աղջային մատենադարան»-ի շաբաթում, հատոր Դ, էջ 1—40:

Թղթի վերնաբիրն է «Թուղթ Պրոկոլեայ հպիկոպոսի առ Սուրբն Սահակ հայրապետ Հայոց և առ Սուրբն Սամբոց»: Բայց հունարեն բնագրում այսպես չէ, այս առանց անվան՝ ընդհանուր դիմումով. «Աստուածաէր և աստուածապաշտ եպիսկոպոսաց և քահանայից և վանահարց, որք միանգամ ընդ ամենայն համօրէն աշխարհն Հայաստանեաց Ուղղափառ Սուրբ եկեղեցւոյ»:

Թուղրուվին ավելորդ համարելով թղթի դավանաբանական քարոզները, որոնցով ձանձրալի լինելու շափ ծայրալիր լցված է գիրախտաբար ամրող մեր հին մատենագրությունը, զնում ենք այսուեղ նամակի բովանդակությունը, որ պատկանում է մեզ և մեր նյութին.

«Եւ զայս ամենայն զի գրեցաք առ սէր ձեր այդր, զի լու եղն մեզ, եթէ արք ոմանք ժանտախօսք ցնորախօսք անկան յաշխարհ այդր և կամին ժանտախօս իմն գրովք, Հակառակութեամբ ստարան ստախորհորդ գիտութեամբ խոտորել զպարզամտութիւն, զանապանոյն, զանմիքենայ, զուղղափառ գեղն հաւատոցն: Բայց ես զերանելովն Պոլսի զառաքելոյն դարձալ ասեմ ձեզ. Զգոյշ լինիշիք, գուցէ իցէ ոք, որ զձեր կապուտ կողոպւտա թողոցու ճարտարամտութեան բանիւր և ընդունայն խարիսութեամբ վարդապետութեան ընդունայնախարիսութիւն մարդկան և ոչ ըստ վարդապետութեանն Քրիստոսի, զի հիմն

սրբութեան հաւատող այլ ինչն ող ոչ կարէ զնել,
քան զայն որ եղեալն է, այսինքն է Յիսուս
Քրիստոս: Արդ կացէք հաստատում ի մի հո-
գի և ի մի անձն՝ նահատակակիցը եղեալ
հաւատովք Աւետարանիս և մի՛ խրուցեալք
ընդուստանիցիք մի՛ լիմիթ ի շարեաց թշնամ-
ույն և մի՛ ի նզով և ի կորուս մատնիջիք
ընդ նեստորեալ և ընդ Թէոդորեալ, որ վար-
դապետն լեալ էր նորա և որ զար բոյսն երե-
ւեցոյց՝ զարաբան նորաձայնս հրէութեան և
զանցուցին ըստ ուրախութիւն հրէութեան և
ըստ հերեսիութիւն առաջին արիանոսացն և
այլցն, որ խոտորեցան ի փառացն սրբութե-
նէ և յուղին հաւատոց և նզովեցան նոքա-
յամենայն ժողովրդոց և այրեցան որ վատի
խորհրդոց գիրքն էին նոցա յանդիման ամե-
նայն ժողովրդոց: Յորմէ և գուրք պահնաջիթ
զանձինս և զնոյն գործ գործեսչիք, զոր սուրբ
ժողովք հպիսկոպոսացն դորժեցին, և մի՛ որ
զառֆամանակեայ ամօթն ամօթ անձին հա-
մարեալ զյափտենից ամօթն ժառանգեցէ
և ընդ նոսս դատապարտեալ ի գժիկս կոր-
ծանեսցի: Այլ պահնաջիթ գուրք զվարդապահ-
տութիւն, զոր ընկալեալ ի հարցն սրբոց, որ
ի Նիկիա սիմեոնոսուն էր ժողովոյն՝ զուլիդ և
զսուրք փառ հաւատոցն հաստատեցին, և
զոր վարդապահտութիւն սուրբքն երանելիք
Բասիլիոս և Գրիգորիոս և որ միանդան նման
նն նոցա, որ սրբութեամբ և հաւանութեամբ
չսուրբ հաւատս ի կեանս իւրեանց հաստա-
տեցին, որոց անուանքն զբեալ են ի պարու-

Ահան կնաց: Ողջ լեռուք ի Տէր և շնորհեալ լիշիք մեղ,

սատուածասէր եղբարբէ։ Երկրորդ թուղթը գրեց Մելիտինի Ակակի և պատկանած առաջնահամայնքի համար արդեն բարեկամացած էր Մելիտին՝ իր ճամբորդությանց ժամանակ։ Այս թուղթը գրված է միայն Սահմանական Հասցեին և անշուշտ նույն թվին։ Թուղթը պահպան է նույնական ոսկեդարլան Հայերնին թարգմանությամբ «Գիրք թղթոց»-ի մեջ (էջ 14—15)։ Թուղթը, որ շատ ավելի ճամանուած է քան Պրոկոփիոս (Ընդամենը երկու էջ), սկսում է Սահմանական ուղղված այսպիսի հարգական բառերով։ «Որ ամենայնին աստուածաւորդ ես և լի սրբութեամբ, տէր իմ և գործակից, ըստ նմանութեան միոյ մարմնոյ յօդապատեալ...»։ Հետո մի քանի տողով պատմում է Նեստորի ըմբռոստությունը և դատապարտությունը, և ավելացնում։ «Ուրեք ուրեք զպարզամիտս յիւր զպարձոցեալ ի շարակամութիւնն ։ Զահի Հարեալ թէ գուցէ և ի ձեր եկեղեցիսդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համարեցաք տղեկլ առ ձեզ զհասարակաց օգուտն խորհելով։ Այսուհետեւ զնում է իր աստվածաբանական պայքարը Նեստորի դեմ և վերջադիմում է նամակը հետեւյալ հորդարով։ ...» Այս իրու անոնցուք վեռողջութեալ է

վերայ իմոյ տկարութեանս աղօթս անպակաս մատուաշիք Սստուծոյ: Բայց մեզ երկիրդ է, թէ գուցէ ի Թէոդորեայ Մամուստիոյ ոխմանենք (ըստ իս թերևս ուղղել սերմանեն) աշակերտեալ ոք դացի և ի չար ժանդէն նեստորի, ի միամիտ անձինս աղդիցէ: Զի զնորա մնացեալ գրեանն իբրև խնդիրս այս յայտնեցաւ, և մանաւանդ որ վասն մարմնախառնն (?) գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհածողով եպիսկոպոսացն, որ յեփիսացւոց քաղաքին եղեւ, ի մի վայր ժողովներ գրնաւ գրեանն և այրել: Արդ փոյթ լիցի ձեզ առանց պղտորութեան գհաւատն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անպական ընկալչիք»:

Երրորդ թուղթը գրեց դարձյալ Մելիտինեկ
Ակակի եպիսկոպոսը Հայ նախարարների
հասցեով, նույն նպատակով և նույնպիսի
հորդորներով, ինչպես նախորդ երկուար. Այս
Երրորդ նամակն է Հասելի մեջ ոսկեղարյան
հայերեն թարգմանությամբ, որ պահված է
«Գիրք թղթոց» հավաքածուում, էլ 19-21:
Թուղթը սկսվում է հետևյալ ողջունի խոսքե-
րով. «Պատուական և առաջինի նախարարք
Հայոց, սիրելիք և ժառայք Քրիստոսի, մե-
ծամեծք և փոքրութ, յԱկակայ եպիսկոպոսէ
Մելիտինէ ի կրտսեր ծառայէ խոնարհու-
թեամբ և սիրով ողջոյն»: Դարձյալ խոսում է
Նեստորի հերձվածի մասին և շատ աղաշա-
կան բառերով խնդրում է, որ շնարվեն մո-
լորիշներից Վերջանում է նամակը այսպիսի
խոսքերով. «Այլ ես թէպէտ և խոնարհ և
գձում եմ քան զամենայն մարդիկ, սակայն
վասն փրկութեան ձերոյ հոգալ ոչ զալարիմ.
և ես երկնշիմ գուց զոր շարժից ի ձենչ
պատրանք մոլորութեանն. եղի զայս վկայու-
թին առաջի Աստուծու» և այլն:

Պրոլետի թղթին պատասխանեցին Սահմակ և Մերոպ, պատասխանը հասել է մեզ ուկեղարյան պատվական հայերենով. Հրատարակված է նաև «Սովետացի Բ հատորում» (Վեհետիկ, 1853, էջ 137—149) և հետո «Գիրք թղթոց»-ում, էջ 9—13: Նույնը կանակ Ֆնտովյանի «Կորյուն»-ի թնական հրատառակության մեջ, էջ 89—92:

Վերնագիրն է՝ «Պատասխանի թղթով»:
Պրոկրի երանելոյ, ի Սահակայ և ի Մազղոցէ,
սուրբ վարդապետացն Հայոց։ Այս վերնա-
գիրը իշարկե հետո է կաղմված։

Նամեկն սկսում է հետևյալ ողջուզնի խոսքով. «Առ ճշմարիտ և աստուածամէր պատուական տէր մեր և հայր, սուրբ եպիսկոպոս Պրոկլոս, ի Սպհակայ և ի Մաշտոց ողջոյն»: Այսուհետեւ դրվում է մի շատ բանաստեղծական պատկեր, որը բերում ենք ու կենդարյան գրաբարով, թեև մի քիչ խանդարգած հետին արտագրողներից:

ռօճառագալթք մշտնջենաւոր յափիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցան ի ձեր լուսաւոր սրբութենէդ, յոյժ ի ծագել իւրեանց զորացուցին զմեր տկարութիւնս և զմեր տկար խորհուրդս բազմապատիկ զօրացուցին, և մեծապէս զկողմն տկարացեալ անդրէն արծարծեալ նորոգեցին, զի անդէն վաղվաղակի թուեցաւ մեզ որպէս նոր ինչ անցք ի վերայ հասանել բազում անձկալի գթոյն զոր օրինակ անցք անցանիցին ընդ քաղցրաբեր բոյս արտոցն քաղցրութեան ցողոյն ի վերայ իշանելով և զտապ տառապյոն հասկալից բուտոյն ի չերմախառն յանբարեխառն օդոցն՝ իրով քաղցրութեամբն բժշկութիւն դարձուցանելով»:

Այսուհետև Սահակ և Մեսրոպ ցավ են հայտնում, որ հունաց մեջ այդպիսի ժանգ է տարածվել և թե իրենք խիստ պատվեր են ուղարկել Հայաստանի ամեն կողմը՝ լընդունելու ամենակին այդպիսի մոլար ուսմունքը. «Արդ որովհետև մոլարն առաջին և գլխաւորն գիր ժանգ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժաղհեցաւ, զայս մեք մեղաց գործ համարեցաք, և ընդ մեծամեծ բազում և անշափ ձերում թղթոյդ տրտմակից եղեալ՝ ըստ մերում տկարութեանս ողբացաք, և յամենայն տեղիս որ շուրջ զմեք բնակեալ էին, յղեցաք մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենակին զայդպիսի բարբարոսս, մի՛ ընդունել ամենակին զվնասարեր կորստական մոլորական հերեսիութեանն վարդապետութիւննա: Հետո տալիս են հայոց դավանանքը. Հորդորում են, որ հույներն էլ հոգ տանեն հերետիկոսության առաջքն առնելու իրենց երկրում. իսկ Հայաստանու թեոդորոս Սոսպուհստացու վարդապետությունը մուտք չէ գտած և եթե այդպիսի բան պատահի, ամեն միշոց կդորժադրեն արմատախիլ անելու համար»:

Ակակի առաջին թղթի պատասխանը գրված է միայն Սահակի կողմից և կարելի է ասել, թե նախորդ թղթի համառոտությունն է միայն, սկսած բոլորովին նույն ձևով և վերջացած նույն ձևով: Թուղթը հրատարակված է նախ «Սովիեցիա-ի Բ հատորում, էջ 150—156 և հետո «Գիրք թղթոց», էջ 16—18:

Ակակի երկրորդ թուղթը, որ ուղարկված էր հայ նախարարներին, մնաց անպատասխան, կամ, եթե երբեք նախարարները պատասխանեցին, այդ պատասխանը մեզ չէ հասած:

§ 2

Այս թղթակցությունից հետո, ինչպիս սպասելի էր, Սահակ և Մեսրոպ որոնեցին դրսից եկած այդ քարոզիչներին և Հայաստանից

դուրս վլնտեցին: Այս Կորյունի խսովերը այս առթիվ. «Յայնմ ժամանակի բերեալ երևեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունալիս աւանդութիւնք առն ուղումն հոռոմի, որուց թէողիոս անուն (Յնտգլանի հրատարակության մեջ ուղղված է թէոդորոս, ինչպիս ունի Փոքր Կորյուն): Վասն որոյ սիւնոդոսական հայրապետացն՝ եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորշացն Սահակայ և Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոց բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն ծովս ինչ սատանայական յարցէ» (Կորյուն):

Այս խոսքերից երեսում է, որ 1) հերձվածովների գրերը Հայաստան բնրվել են, 2) այդ լսելով հայրապետները զգուշացուցիլ գրեր գրել են և 3) Սահակ և Մեսրոպ նրանց արտաքսել են երկրից դուրս:

Բայց Զամշան և իր հետևորդները այս տեղից սկսած, ստեղծում են մի ընդարձակ պատմություն: Իրը թե Սահակ զգուշությամբ քննելով հերձվածովական գրքերը, հրաման հանեց նոր ժողով զումարելու Աշտիշատի մեջ, այս է երրորդ ժողով Աշտիշատու, որ ըստ Զամշանի գումարվեց 436 թվին, նախորդ ժողովից 3 տարի հետո: Այդտեղ հավաքվեցին Հայաստանի եպիսկոպոսները, երեցները և վանականները, մեջ բնրվեցին թեոդորոսի գրքերը, որոնք քննության ենթարկելով, գտան, թե հակառակ են սուրբ հայրերի վարդապետության և համաձայն նեստորի քարոզության: Ուստի միաբան վճռով նզովք դրին նրանց վրա և հերքեցին: Նույն ժողովում Սահակ մի ճառ խոսեց թանին մարդեղության վրա, հայտնելով, թե Միածին Որդին Աստուծո անարատ Կուլսից առավ մեր բնությունը և եղավ մարդ կատարյալ և Որդի Մարդո, թանի անձնավորության մեջ անբաժանելի և անշփոթ միավորությամբ միացած: Այս բանը հիշատակում է Վահան եպիսկոպոս Նիկոր, Շիրակավանի ժողովում, ըստ Զամշանի (Ա, էջ 527), հանելով Հովհանն իմաստասեր կաթողիկոսի գրքերից. «Սուրբն Սահակ ասաց ի ճառին՝ որ յԱշտիշատն խօսեցաւ, մեք խոստովանիմք...» (ձեռագիր Վենետիկի, էջ 172):

Այսուհետև Սահակ բոլոր ժողովականների հետ միացած՝ թեոդորոս Սոսպուհստացու գրքի գեմ ուղիղ դավանության մի թուղթ գրեց Պուսի Պորկդ պատրիարքին՝ խնդրելով նրա հավանությունը: Ուղարկեցին նաև թեոդորոսի գրքից ինչ-ինչ մասեր, ուր թեոդորոս նենգուաթատիր խոսքերով Պրիստոսին թափանամ էր երկու Որդի: Հայոնեցին նույնպիս, թե իրենք մերժել են այդ գիրքը, այդ վար-

դապետությունը և այդ աղանդավորներին: Այս թուղթի ուղարկվեց Պրոկոփին՝ թարգմանչունենարից մեկի միջոցով, որ հունաց և լատինաց գրքերում կրում է մերթ Արքերին և մերթ Արքելին (Արքել) անունը, իսկ Զամշյան համարում է Ղալոնդ երեց և իր աշակերտակցը՝ Արքահամ:

Պրոկի կարդաց Հայոց թուղթը և Թեոդորոսի գրքերը, մերժեց Թեոդորոսի խոսքերը և շատ հավանեց հայոց ուղիղ վարդապետության, ծողով գումարեց իր եպիսկոպոսուների հետ և նրանց հետ միացած՝ զավանության ընդարձակ մի թուղթ գրեց Հայաստան: Այս թուղթը, որ եկեղեցական տարեգրության մեջ նշանավոր է, թեև հայերեն չի թարգմանված, բայց կա հունարեն և լատիներեն (վերշինը Դիոնիսիոս կարճահասակի ձեռքով, «Praefatio» և այլն: Զամշյան լատիներենից թարգմանում է նաև թղթի առաջին և վերջին մասերը: Թուղթը Պրոկի ուղարկեց նույն Ղեոնդ և Արքահամ թարգմանիշների միջոցով: Սահակ և Մեսրոպ Հայածանք հանեցին հերձածողների դեմ և նորեկ քարոզիշները դեռ մեր երկրում լավ Հայաստատված՝ դուրս վտարվեցին:

Այս բոլորը կեղծիք է. Աշտիշատում ժողով գումարված չէ ո՞չ առաջին և ո՞չ երկրորդ. ամբողջ իրողությունն այն է, որ Պրոկի մի թուղթ և Ակակ երկու թուղթ է գրել Հայոց, որոնց պատասխանել են Հայերը: Ո՞չ ճառախոսություն կա Աշտիշատում և ո՞չ գրքերի առարկում: Սուտ է Վահան եպիսկոպոս նիկու, սուտ է և Պրոկի երկրորդ կոչված թուղթը, որ ճիշտ այն է՝ ինչ որ վերը ցույց տվինք և որ Հայերեն ոսկեպարյան թարգմանությամբ էլ կա: Այս մասին համառու խոսում է Արել եպիսկոպոս Միթթարյանց, «Պատմություն ժողովոց», էջ 53, հերքելով Զամշյանի ասածները, իսկ ավելի գիտական ձևով Հ. Ա. Վարդանյան, որ հերքում է Պրոկի երկրորդ թուղթը, ինչպես տեսանք վերևում: Ցավալի է, որ այս բոլորից հետո և այս բոլորին անդիտակ, Աղոնց նորից է քննության ենթակում այս հարցը, Հավատում ուշ ժամանակի պատմիչ Լիքերատի վկայություններին և զրա հիման վրա խարերա դուրս բերում Կորյունին, իրը թե Կորյուն վերոհիշյալ Արերիոսն է (երկու անունների մեջ էլ ը կա և այս բավական է երկուսին նույնացնելու համար), որ Ղեոնդի հետ զնացել է Պոլիս ոչ թե թարգմանչական գործով, այլ կրոնական առաքելությամբ՝ նեստորական հարցով: (Տե՛ս «Հանդիս ամսօրյա», 1925, մայիս—նոյեմբեր):

Համապղի և հաշտարար ելք է տալիս հարցին Հ. Ակինյան, որ իր ուսումնասի-

րության մեջ («Հանդիս ամսօրյա», 1935, էջ 485) մանրամասն քննելով խնդիրը, հասնում է այն եղանակացության, թե վեճը, թղթակցությունը, զրքերի առաքումը և այլն կատարված են Հունահայաստանի հետ: Ակակի երկրորդ թուղթը՝ «Առ պատուական և առաքինի նախարարս Հայոց», ուղղված է հունահայոց իշխաններին: Դրա համար էլ պատասխանը չունենք մեր ձեռքին: Ակակիոս, իրեւ Մելիտինինի եպիսկոպոս, կարող էր միջամուխ լինել իր սահմանակից հունահայոց կրոնական գործերին և զարգացնել նրանցով, քանի որ նրանք բուն Հայաստանի կաթողիկոսական իրավասությունից դուրս էին: Համեմայն գեպս, Պարսկական Հայաստան ո՞չ նեստորականներ էին մուտք դործել և ո՞չ էլ Թեոդորի գրվածքների շորջը խնդիր էր հարուցված, ինչպես իմանում ենք Սահակի պատասխանից:

§ 3

Կանոնագրքի մեջ Սահակի անունով կան սակայն ընդարձակ կանոններ, ընդամենը 55 կանոն, բաժանված վեց գլխի, որոնք բոլորը վերաբերում են եկեղեցական պաշտոնյաների կարգապահության և եկեղեցիների հասությին: Ամբողջական հրատարակությունը տե՛ս «Կանոննգրք» (Հրտ. Ղտնյան, Թիֆլիս, 1913, էջ 15—56): Թե ե՞րբ և ո՞ւր որոշվեցին այդ կանոնները՝ ոչինչ Հայտնի չէ պատմիշներից: Արել եպիսկոպոս Միթթարյանց, «Պատմություն ժողովոց», էջ 39, գնում է Վաղարշապատի ժողովում, որ տեղի է ունեցել իբր թե 426 թվին: Օրմանյան էլ («Ազգապատում», Ա, էջ 283), խոսում է նույն կանոնների մասին, բայց ո՞չ ժողովի տեղն է հիշում և ոչ թվականը: Եվ Հայտնի չէ, թե որքան վակերական են դրանք:

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Նեստորականները նեստորի ներձվածը խորամանկությամբ տարածելու համար հրատարակեցին Թեոդորոս Մովսուսատացու գործերը, որ նեստորի ուսուցիչն էր, նետը խանելով եաւ նեստորի մտքերը. հարողիշները եկան եաւ Հայաստան. այս լսելով Պրոկի և Ակակիոս երեխ բուլը գրեցին հայոց՝ զգուշացնելու համար, որոնց պատասխանեցին Սահակ և Մեսրոպ:— 2. Հետո բարողիշներին վտանցին Հայաստանից. Զամշյան այս առիվ գումարված է դեռու Աշտիշատի երրորդ ժողովը, ինչ որ կեղծիք է:— 3. Կանոնագրքում Սահակի անունով ունենք 55 կանոն, որոնց վակերականությունը անսուլյգ է:

(Շարունակելի)